# community

The New Apostolic Church around the world

01/2016/AM

# 2016 թվականի նշանաբանը՝ հաղթել Քրիստոսով

Ժամերգություն Անգլիանդում՝ Աստված ուխտ է կապում մեզ հետ

Դավանաբանություն՝ Քրիստոսի եկեղեցին և սպասավորությունը

Հրավերք՝ Երիտասարդության Միջազգային Օր -2019

New Apostolic Church
International

# Հաղթել Քրիստոսով

Միջազգային ՆԱԵ

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր,

Նոր տարում բոլորիդ սրտանց ցանկանում եմ Աստծո օրհնանքը,

- որ դուք զգաք Նրա մոտիկությունն ու ձեզ ուղեկից լինելը,
- որ դուք Նրա սերը կրեք
- և որ դուք Նրա ողորմածությունն ապրեք:

Տարեմուտը մեզ առիթ է տալիս, որ մեր մտքերը կենտրոնացնենք և մեզ հարց տանք.<< Ինչքան եմ առաջ գնացել դեպի իմ նպատակը տանող ճանապարհին>>:

Դրա համար կա մի շատ հստակ մասշտաբ: Պատկերացրեք, որ դուք գնում եք դեպի տուն. սկզբից նպատակը դեռ փոքր է լինում, այն կարելի է մեկ մատով ծածկել, սակայն, ինչքան մոտենում եք, այնքան ավելի է մեծանում և արդեն հաստատ կարողանում եք այն ճանաչել:

Մեր նպատակը հավերժ Տիրոջ մոտ լինելն է: Արդյո±ք անցնող տարում մենք Նրան ավելի ենք մոտեցել: Արդյո±ք Հիսուսը այսօր ավելի մեծ է, քան՝ մեկ տարի առաջ: Կարողանու±մ ենք Նրա էությունը ավելի լավ ճանաչել:

Որպեսի առաջ գնանք, մեզ կօգնի միջանկյալ նպատակներ ունենալը.<< Սիրով դեպի գործ>>- 2014 –ի տարվա նշանաբանը, դա ևս մի էտապ էր:

Կամ << Ուրախություն Քրիստոսով>>, հենց անցած տարվա մեր նշանաբանը, էլի շարունակելի մի ճանապարհատված:

Հիմա եկեք հաջորդ քայլն անենք. Աստված իր խոսքով և հաղորդությամբ մեզ ուժ է տալիս պայքարելու այն ամենի դեմ, ինչը մեզ բաժանում է Նրանից; Նա մեզ ուժ է տալիս այդ պայքարում հաղթելու:

Մենք ուզում ենք հաղթել Քրիստոսով:

- Քրիստոսը օգնում է մեզ չարին հաղթելու: Նա այս աշխարհից չարը չի վերացրել, բայց տիրում է նրան: Քրիստոսին ոչինչ չի կարող ետ պահել փրկելու նրանց, ովքեր վստահում են իրեն:
- Քրիստոսը օգնում է մեզ վախը հաղթելու: Այս տարի էլ մենք նորից պետք է մտահոգվենք ապագայի համար: Հավանաբար դժվարանում ենք որոշումներ կայացնել վախենալով այն բանից, ինչի մասին մտածում ենք: Սակայն Հիսուսը այստեղ է, որպեսզի մեզ ղեկավարի:
- Քրիստոսը օգնում է մեզ, որպեսզի ինքներս հաղթենք՝
  - հպարտությունը, որը մեզ չի թողնում Աստծո օգնությանը հասնելուն,
  - դատապարտումը, որը մեզ չի թողնում մերձավորին սիրել,
  - մեր կարծիքները հայտնելու մղումը՝ առանց խաղաղության վրա ուշադրություն դարձնելու:

Իսկ ինչպե±ս ես կարող եմ հաղթել Քրիստոսով:

- նրանով, որ հավատամ Հիսուսի ճշմարտությանը,
- նրանով, որ հետևեմ Նրա օրինակին,
- նրանով, որ հաստատակամ լինեմ Նրան վստահելու մեջ,
- նրանով, որ միասնություն փնտրեմ համայնքում:

Սրանք միայն մի քանի մտքեր էին գալիք տարվա մեր նշանաբանի վերաբերյալ: Մենք մի ամբողջ տարի ժամանակ ունենք, որպեսզի այն խորացնենք, մի ամբողջ տարի՝ դեպի մեր նպատակը մեծ քայլ անելու համար:

Ձեր՝ Ժան- Լյուք Շնայդեր

# Աստված մեզ հետ ուխտ է կապում

Լուսանկարը՝ ՆԱԵ Ավստրալիա

Աուկլանդում տեղի ունեցած ժամերգությանը ներկա էին 900 մասնակիցներ, իսկ 1100-ը միացել էին հեռարձակմամբ՝ Հարավային Իսլանդիայում, Ավստրալիայում, Ֆիջի կղզիներում և Պապուա-Նորգվինեայում:

Սիրելի եղբայրներ և քույրեր, ես առաջին անգամ եմ այստեղ՝ Նոր Զելանդիայում: Շրջանային առաքյալից և եղբայրներից ես լսեցի, որ Նոր Զելանդիան հրաշալի երկիր է: Ես ձեր երկրից դեռ ոչինչ չեմ տեսել, բայց հավատում եմ այն ամենին, ինչ ինձ ասել են: Ես նաև լսել եմ, որ երկիրն ունի հրաշալի համայնքներ և հավատացյալ եղբայրներ ու քույրեր: Դրան ևս հավատում եմ, իսկ այսօր կարող եմ դա տեսնել և համոզվել:

Երեկ մենք հանդիպեցինք երեխաներին և մի արտակարգ օր ապրեցինք: Կիրակնօրյա դպրոցի երեխաների հետ տեղի ունեցած հանդիպումը ուներ հետևյալ նշանաբանը, որը ես այստեղ՝ երգարաններում տեսա.<< որ ես պետք է նրանով լինեմ, ինչը իմ Հորն է>>: Դուք գիտեք, որ այս նշանաբանը վերաբերում է Հիսուսի խոսքին, որը Նա տասներկու տարեկանում էր ասել, երբ Նրան իր ծնողները փնտրում էին և տաճարում գտնում.<< Ինչու էիք ինձ

## 5. Մովսես 5,3

<<...Տերն այդ ուխտը արեց ոչ թե ձեր հայրերին, այլ՝ ձեզ, իսկ դուք բոլորդ կենդանի եք այսօր>>:

փնտրում, չգիտեք, որ ես այնտեղ պետք է լինեմ, ինչը իմ Հորն է >>: Եվ, իհարկե, դա վերաբերվում է բոլորիս, ոչ միայն երեխաներին: Մենք պետք է լինենք այնտեղ, ինչը մեր Հորն է: Հնարավոր է, որ սա որպես պարտավորվածություն, ստիպողականություն հնչի, իսկ դա հաճելի չէ. Ես պետք է այն անեմ, ինչը իմ Հորն է պատկանում: Բայց դրանով նկատի չի առնված, որ դու չպետք է ժամերգության գնաս, դու չպետք է նորառաքելական եկեղեցուն հարես: Եթե դու դա չանես, ինչ որ բան կպրես:

Եկեք մեկ անգամ էլ դիտարկենք, թե դա ինչ է նշանակում. <<... ինչը իմ Հորն է>>: Այլ ձևակերպումով՝ Ինչը իմ Հոր գործն է: Նրա գործն է մարդկանց չարից, անարդարությունից, վերջապես, մահից փրկելը: Դրա համար է նա աշխատում: Դրա համար նա վստահեցնում է, որ բոլոր մարդիկ հնարավորություն ունեն Քրիստոսին ճանաչելու, հավատով դեպի Նա գալու և դրանով փրկության հասնելու: Դրա համար է աշխատում մեր երկնային Հայրը, և մենք մեծ ողորմածություն ունենք, հնարավորություն և նաև առաջադրանք, դրան մասնակից դառնալու, այդ գործին ազդելու: Մենք ինքներս գնում ենք դեպի փրկության ճանաչում և իրավունք ունենք օգնելու, որ փրկության արժանանան նաև մյուսները: Եթե մենք այդպես ենք հասկանում, ապա կարծում եմ, որ այս նշանաբանը ստիպողական չէ, ընդհակառակը՝ ողորմածություն է և օրհնանքի ու ուրախության աղբյուր: Ոչ միայն մեր երեխաները, այլև մենք՝ բոլորս, դուք էլ եղբայրներ ու քույրեր, հորդորվում ենք լինել այնտեղ, ինչը մեր Հորն է:

Այժմ լսեցինք մի խոսք, որն ուղղված էր Իսրայելի ժողովրդին անցյալում: Խոսքը այն ուխտի մասին է, որ Աստված կնքել էր իր ժողովրդի հետ: Կարճ անդրադարձ պատմությանը. Աստված մի ժողովուրդ ընտրեց՝ Իսրայելի ժողովրդին, անշուշտ, իր ժամանակների ոչ ամենամեծ, ամենաուժեղ և ամենանշանակալից ժողովրդին: Ոչ մի համոզիչ պատճառ չկար հենց այս ժողովրդին ընտրելու համար, սակայն Աստված իր սերն ու ողորմածությունը այս ժողովրդին տվեց և նրա հետ ուխտ կքեց: Նախ, Նա նրանց ազատեց եգիպտական գերությունից, փարավոնի ձեռքից և Հորեբ սարի վրա ասաց նրանց.<< Դուք պետք է իմ սեփականությունը լինեք բոլոր ժողովուրդներից: Սա ուխտի առաջին մասն էր: Նա առաջնորդեց իսրայելացիներին Կարմիր ծովով և փրկեց եգիպտացիների ձեռքից: Նա նրանց խոստում տվեց և խոսեց ապագայի մասին, որը Նա կանխատեսել էր նրանց համար: Նրանք պետք է մի այնպիսի երկիր գնան, որտեղ կաթ ու մեղր է հոսում: Եվ Նա նրանց տվեց օրենքն այն պայմանով, որ նրանք կօրհնվեն, եթե դրա համաձայն գործեն: Սա էր ուխտի համառոտ բովանդակությունը, որը Աստված իր ժողովրդի հետ էր կապել: Եթե նրանք ուխտը պահեն, ապա օրհնված կլինեն:

> Ոչ, ուխտը, խոստումը վերաբերվում է ոչ թե հայրերին, այլ՝ մեզ, որ այսօր այստեղ ենք և ապրում ենք:

Այդ ամենը՝ փրկությունը, Կարմիր ծովով անցկացնելը, ուխտ կապելը, Հորեբ լեռան վրա կատարվածը, վաղուց անցյալում են, և այն սերունդը, որն ապրել է այդ ամենը, մահացել է: Քառասուն տարի անց նրանց հայրերից ոչ մեկը էլ չէր ապրում: Միայն Մովսեսն ու մի քանի մարդ, ովքեր ականատեսն էին եղել Կարմիր ծովով անցնելուն, վկայում էին, թե Աստված ինչպես է փրկել իր ժողովրդին: Մյուս վկաները, որոնք տեսել էին, թե ինչպես է ամպը ծածկել լեռը

Երեխաները երաժշտական ողջույնով դիմավորեցին գլխավոր առաքյալին և նրան ուղեկցող առաքյալներին

Ժամերգության ընթացքում գլխավոր առաքյալի քարոզը լրացրեցին՝ շրջանային առաքյալ Նոել Է. Բարնեսը/ նկարում զոհասեղանի մոտ կանգնած/, ինչպես նաև շրջանային առաքյալի օգնականներ Դավիդ Դեվերայը և Զոն Ֆենդթը

և ծուխ է ելնում ամպրոպով և կայծակով, ու Աստծո ձայնն է լսելի դառնում, այլևս կենդանի չէին: Այն սերունդները, որոնց դիմում է Մովսեսը, այդ պատմությունները լսել են իրենց հայրերից: Դուք գիտեք, թե ինչ է լինում, երբ տեղեկություններ են հաղորդում անցյալի մասին. լսողները ասում են. << Դա հավանաբար մի քիչ չափազանցված է>>: Երբ իրենք չեն դա ապրած լինում, ապա կասկածում են՝ արդյոք պատմությունը ճիշտ է, թե՝ մի քիչ գունազարդված:

Բայց Մովսեսը ասել է իսրայելացիներին.<< Դա իսկապես այդպես է եղել, ինչպես որ դուք եք լսել: Աստված կիսել է Կարմիր ծովը և մեզ առաջնորդելով դուրս բերել, Նա ինքն է լեռան վրա մեզ հետ խոսել>>:

Հիսուսը քեզ համար է մահացել և հարություն առել, և Նա կրկին գալու է քեզ համար, քո փրկության համար:

ետևում էր և նրանք մտածում էին, որ այդտեղ էլ վատ չէ: Այո, մենք հասկանում ենք, որ հայրերը անապատում խոստացված երկրի մասին էին երազում, որը նրանք չունեին, փոխարենը՝միայն սով և ծարավ, զրկանքներ, նրանք հարազատ տան կարոտ ունեին և ասում էին.<< Չէ որ անապատը ետևում է մնացել, մենք կարող էինք այստեղ մնալ, մեզ համար այստեղ ևս լավ կլինի: Ինչու համար դեռ պետք է այս պայքարը տանենք խոստացված երկրի համար>>:

Մովսեսին ծանոթ էր այդ վտանգը, դրա համար էլ նա ասաց.<< Ուխտը, խոստումը մեր հայրերին չի վերաբերվում, այլ՝ մեզ, որ այսօր այստեղ ենք և ապրում ենք: Աստված ուզում է ձեզ այդ երկիրը տանել և արժե դրա համար պայքարել>>:

վ հետո խոստացված երկրի պատմությունը: Ժողովուրդը գիտեր, որ դա խոստացված երկիրն է, բայց նա նաև գիտակցում էր, որ պետք է պայքարի, որպեսզի երկիրը նվաճի: Անապատը այդ ժամանակ արդեն իրենց

Մովսեսը գիտակցում էր, որ իր ժողովուրդը այլ ժողովուրդների հետ է հարաբերվելու, որոնց մոտ այլ օրենքներ են գործում: Այդ ժամանակ իսրայելացիրները կտեսնեն, որ իրավունք ունեն խոզի միս ուտել, շատ այլ

բաների իրավունք էլ ունեն և իրենք լավ են զգում իրենց: Որ նրանց կյանքը այնպես լավ է, ինչպես իրենցը, որ երջանիկ են և հաջողություն ունեն: Այնտեղ բոլորովին ուրիշ օրենք կա, բայց այն տեսանելիորեն լավ է գործում: Ինչու± պետք է մենք անպայման օրենքը կատարենք: Չենք կարո±ղ փոխհամաձայնությունների գնալ:

Սա է այն պատճառը, թե ինչու է Մովսեսը ժողովրդին հավաքել ու ասում. Ուխտը վերաբերվում է ձեզ, որ հիմա այստեղ կանգնած եք և ապրում եք:

Թողնենք Հին կտակարանը, անցնենք Նոր կտակարանի ժամանակներին: Նոր ուխտը շարունակությունն է հնի: Աստված ուղարկեց իր Որդուն, որպեսզի իր ժողովրդին փրկի. փրկի իր զոհաբերությամբ, փրկի իր հարությամբ, փրկի իր ծառայությամբ: Նրա աշակերտները այդ ամենի վկաներն էին: Նրանք ճանաչում էին Հիսուսին, ապրում էին նրա հետ, խոսում էին նրա հետ, նրանք հանդիպեցին հարություն առածին և ճանաչեցին. սա Նա է, Նա մահացել

է և հարություն առել մահից: Նա նվաճել է հաղթանակը: Հիսուսը նրանց խոստում է տվել.<< Եվ երբ ես գնամ, ձեզ համար տեղ եմ պատրաստելու, նորից եմ գալու և ձեզ ինձ հետ եմ տանելու, որպեսզի դուք էլ լինեք այնտեղ, որտեղ ես եմ>>: Ինչպիսի արտակարգ խոստում:

Նա նրանց տվեց Ավետարանը, նրանց տվեց իր պատվիրանները և ուսուցանեց նրանց, որ իր խոսքը պահեն, որպեսզի օրհնվեն: Այդ ամենը 2000 տարի առաջ էր: Իսկ ինչպե±ս է այսօր:

Այսօր ոչոք չի կարող ասել. ես տեսել եմ հարություն առածին: Ես կարող եմ վստահեցնել, որ դա ճիշտ է: Նա հարություն է առել, ինչպես որ Նա ասել է: Եվ պետք է ասել, որ անգամ քրիստոնյաների մեջ լսում ենք կարծիքներ, որոնք ասում են. օ, այո, պատմությունը մահվան և հարության մասին, ով գիտի, թե դա արդյոք այդպես է եղել, հավանաբար ինչ որ բան գունազարդել են: Դա կարող է նաև խորհրդանշական հասկացվել, որպես պատկեր: Խոսքը նշանակության մասին է, ոչ թե այն մասին, որ պետք է հավատան, թե նա մահացել ու հարություն է առել: Արդյո±ք չափազանցված չէ, որ որևէ մեկը ստիպված է մահանալ մեզ համար, մեր փրկության համար: Շատերը այսօր էլ դա տարօրինակ են համարում: Դա մեր ժամանակի վտանգներից է:

Նոր կտակարանում գրված ծառայությունը առաքյալների ծառայությունն է, առաքյալներ, ովքեր ուղարկված են Տիրոջ կողմից, որպեսզի վկայեն Քրիստոսի զոհաբերությունը, Նրա մահը և հարությունը: Հավատացեք Հիսուս Քրիստոսի հարությանը, այն ճշմարտություն է: Ինչ որ Սուրբ գրքում մահվան և հարության մասին գրված է, ճշմարտություն է: Դա մեր հավատի բովանդակությունն է: Դա Քրիստոսի սուրհանդակների առաջնային առաջադրանքն է: Հիսուսը նրանց ուղարկել է հետևյալ խոսքերով.<< Ով ձեզ ընդունում է, նա ընդունում է նաև ինձ>>: Սրանով էլ առաքյալները կարողանում են Քրիստոսի անունից խոսել: Իսկ ռ±րն է այն լուրը, որ նրանք հաղորդելու են: Նրանք բոլորին ճշմարտությունն են հաղորդելու. Հիսուսը քեզ համար է մահացել, քեզ, որ դու ասօր այստեղ ես և ապրում ես, նրա ուխտը անձնապես քեզ հետ է:

Ամեն ինչ տեղի ունեցավ քեզ համար, քո կամքի համաձայն, և տեղի է ունենալու քեզ համար, քո փրկության համար. Հիսուսը քեզ համար է մահացել և հարություն առել, և նա նորից է գալու քեզ համար, քո սրբացման համար: Սա այն պայմանն է, որ Աստված քեզ հետ է արել:

Սա Նոր կտակարանի ծառայության

առաջադրանքն է, և մենք, որպես առաքյալներ չպետք է հոգնենք մեր Տիրոջ և Վարդապետի առաջադրանքը կատարելու գործում: Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսի մահվանն ու հարությանը, մենք հավատում ենք, որ Հիսուսը մեզ համար է մահացել, մենք հավատում ենք, որ Նա կրկին գալու է մեզ փրկելու: Նրա խոստումն է.<< Դու իրավունք ունես Աստծո թագավորությունը գնալու: Դու գնալու ես դեպի Նրա փառահեղությունը, դեպի Աստծո հետ հավերժ միասնություն>>:

Շատերը կարծում են, որ այդ լուրը մեր նախնիներին է վերաբերվում: Նրանք ապրում էին ծանր պայմաններում, գոյության համար դժվար պայքար էին մղում, ստիպված էին թշվառություն, կարիք, հիվանդություն, պատերազմ, ճգնաժամ և բազում այլ վտանգներ ապրել, նրանք կարիքն ունեին մի բանի, որը իրենց հույս կտար. մի օր կգա փրկությունը, հետո ամեն ինչ ավելի լավ կլինի:

Այսօր մենք բժշկական լավ ծառայություն ունենք, ստիպված չենք շատ մտահոգվելու և ապագայի համար վախենալու: Մենք կյանքի հմտություն ունենք, շատ խնդիրների համար լուծումներ կան: Այստեղ, երկրում խաղաղություն է տիրում և կարելի է ապագան կառուցել: Մենք ստիպված չենք այլևս անդրշիրիմյան լավ կյանք հուսալ: Կարող են այստեղ, երկրի վրա իրենց երջանկությունը իրականացնել, եթե ճիշտ գործեն: Այդտեղ չպետք է այլևս անդրշիրիմյան աշխարհի լավի համար երազել: Աստծո հետ միասնության կարոտը, Աստծո թագավորության սպասումը այլևս այդտեղ ոչ մի դեր չի խաղում: Շատ մարդիկ այլևս դրանով չեն հետաքրքրվում:

Նոր ուխտի ժամանակ Աստված ուղարկել է Սուրբ Հոգուն, ով առաջադրանք ունի ուսուցանելու և Աստծո Որդուն փառաբանելու: Նա տեղեկացնում է մեզ Քրիստոսի փառահեղության մասին, առաջնորդում է դեպի ճանաչումը Քրիստոսի և ուսուցանում է մեզ ,թե ինչումն է կայանում Քրիստոսի փառահեղությունը: Հիսուսն ասում է նրա մասին.<< Յուրայիններից Նա վերցնելու է և ձեզ հաղորդելու: Այն ամենը, ինչ Հայրն ունի, իմն է>>:

Այսօր էլ Սուրբ Հոգու առաջադրանքն է մեզ ցույց տալու, թե ով է Քրիստոսը, առաջնորդելու դեպի ողորմածությունը, Նրան փառաբանելուն, Նրա մեծությունը ճանաչելուն: Նրա փառահեղությունն ավելին է, քան այն ամենը, ինչը մենք կարող ենք պատկերացնել: Աստծո հետ միասնությունն այնքան հրաշալի է, որ ոչ ոք դրա մասին պատկերացում չունի: Սուրբ Հոգին ասում է մեզ. Հավատա Քրիստոսի խոստմանը, արժե Հիսուսին հետևելը: Արժե այն ճանապարհով գնալը, որը տանում է դեպի Աստծո թագավորություն, Աստծո հետ միասնական փառահեղության: Դու չես զղջա:

Նոր ուխտի ծառայությունը առաքյալների ծառայությունն է, ովքեր ուղարկված են Սուրբ Ընթրիքը տոնելու առաջադրանքով: Յուրաքանչյուր Սուրբ Ընթրիքի ժամանակ մենք ուժեղացնում ենք Աստծո հետ կապը: Մենք միշտ ավելի ենք ճանաչում Հիսուս Քրիստոսին: Ինչքան մենք լավ ճանաչենք Հիսուս Քրիստոսին, այնքան ավելին կլինի մեր սերը Նրա հանդեպ և այնքան ավելի մեծ կլինի Նրա մոտ լինելու մեր ցանկությունը: Սա սուրբ Ընթրիքի խոր նշանակությունն է: Հիսուսն ասում էր.<< Եթե դուք չուտեք Մարդու Որդու մարմինը և չխմեք Նրա արյունը, դուք ձեր մեջ կյանք չեք ունենա: Ով ուտում է իմ մարմինը և խմում է իմ արյունը, նա հավերժ կյանք է ունենում>>:

Գլխավոր առաքյալ Շնայդերը տոնում է Սուրբ Ընթրիքը ննջեցյալների համար

Այս ամենը մարդկանց հաղորդելը նույնպես առաքյալների առաջադրանքն է:

Հավերժական կյանքը, հավերժ միանությունը Աստծո թագավորությունում արտակարգ է: Արժե դեպի այնտեղ տանող ճանապարհով գնալ: Ամեն ինչից այն վեր է և երկրային ոչ մի բանի հետ համեմատելի չէ: Եվ որպեսզի այնտեղ հանենք, պետք է մասնակցենք Սուրբ Ընթրիքին, իսկ դա մենք ստանում ենք ժամերգության ժամանակ: Բավական չէ միայն ասել.<< Ես հավատացյալ քրիստոնյա եմ, ես Աստծո հավատացյալ զավակ եմ, ես բարին եմ անում, որտեղ կարողանում եմ>>: Աստծո թագավորություն հասնելու համար պետք է այն սնունդն ընդունենք, որը Աստված մեզ է տալիս, Սուրբ Ընթրիքը, որը այստեղ Նրա

եկեղեցում է տրվում, որտեղ առաքյալներն են գործում:

Ինչպես իսրայելացիներն էին խոստացված երկիր գնալու ճանապարհին մանանա ուտում, այնպես էլ մեր ճաապարհին Սուրբ Ընթրիքն է մեզ համար որպես սնունդ հանդիսնում: Առանց դրա ոչինչ չի լինի:

Խոսքը այն բանի մասին չէ, որ ես ուզում եմ մարդկանց ժամերգությունների այցելել տալ, բայց ես չեմ կարող լռել, որ Սուրբ Ընթրիքի արժանապատիվ ճաշակումը անխուսափելի է՝ Քրիստոսի գալստյանը պատրաստ լինելու և Աստծո հետ հավերժ միասնության հասնելու համար:

Առաջին վտանգը, որը Մովսեսը տեսավ, այսօր տեսնում ենք և մենք: Շատերն ասում են.<< Աստծո այս օրենքը, պատվիրանները և ավետարանը, մենք ճանաչում ենք շատերին, որոնք այլ բանի են հավատում: Նրանք ունեն իրենց սեփական օրենքները, և պատկերացրու, որ նրանք երջանիկ են այնպես, ինչպես և մենք, երբեմն ավելի երջանիկ, քան՝ մենք: Եվ, հավանաբար, դա եղել է մեր հայրերի և նախահայրերի մոտ, բայց այսօր դա այդպես չէ: Նրանք ավել շատ հաջողություն ունեն, քան՝ մենք>>: Հետո մենք պետք է հաջողությունը տարբերակենք: Հիսուսն ասում էր.<< Ով իմ պատվիրաններն ունի և դրանք պահում է, ապա դա նա է, ով ինձ սիրում է: Բայց ով ինձ սիրում է, նա իմ Հոր կողմից է սիրվելու, և ես էլ եմ նրան սիրելու և ինձ նրան բացահայտելու>>:

Իսկապես, հարուստ, հաջողակ և երջանիկ լինելու համար, երկրի վրա զարգանալու համար ավետարանի կարիք չկա; Դրա համար շատ ալ ճանապարհներ կան: Բայց Քրիստոսի սերը ապրելու,Նրա բարություններն ու մոտիկությունը իմանալու, Նրան ճանաչելու համար կա միայն մեկ ճանապարհ՝հնազանդ լինել ավետարանի հանդեպ, ավետարանը կիրառել կյանքում, դա վեաբերվում էր մեր հայրերին և այսօր վերաբերվում է նաև մեզ: Դա մենք չենք անում, որ ավելի շատ դրամ ունենանք, որ հիվանդությունից պաշտպանվենք, որ վստահ լինենք, որ մեր երեխաները լավ զարգացում կունենան, այլ մենք հնազանդ ենք Տիրոջ պատվիրաններին, Աստծո օրենքին, որովհետև մենք ուզում ենք Հիսուսի սերն ապրել,Նրա աջակցությունն ապրել: Մենք ցանկանում ենք Քրիստոսի հետ միասնության երջանկությունն ապրել: Ինչքան հետևողականորեն մենք հետևենք Քրիստոսի օրենքին, այնքան ավելի լավ այն կհասկանանք, ավելի լավ կհասկանանք այն պլանը, որը Նա ունի մեզ հետ կապված; Նրա ուխտը, նոր ուխտը ոչ միայն հայրերի համար է, այլ մեզ համար, որ աստեղ ենք և ապրում ենք: Մենք ապրում ենք այն հավատով, որ Քրիստոսը մեզ համար է զոհաբերվել, և , որ ուզում է մեզ իր հետ վերցնել, երբ նա կրկին կգա: Դա նրա ուխտն է, որը կապել է մեզ հետ, Նրա խոստումը, որը վերաբերվում է մեզ, և որի իրականացումն էլ մենք ուզում եք ապրել: Դրա համար էլ մենք գալիս ենք ժամերգության, դրա համար էլ Սուրբ Ընթրիքը մեզ համար կարևոր է և դրա համար էլ մենք մտահոգվում ենք այն արժանապատիվ ճաշակելու համար, դրա համար էլ մենք ուզում ենք այն ճանապարհը գնալ, որը մեզ Տերն է ցույ տալիս, դրա համար էլ մենք հնազանդ ենք նրան և կիրառում ենք Նրա ավետարանը մեր առօրյայում:

Ես գիտեմ, որ հիմնականում ամեն ինչ նոր չէ, բայց գուցե այս խոսքը այսօրվանից սկսած հենց քեզ համար է և ինձ համար, և գուցե ծառայում է նրան, որ մենք մեր կյանքում ինչ որ բան փոխենք: Դա կարող է և այդպես լինել:

## Հիմնական մտքեր՝

Մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսը իսկապես մեզ համար է զոհաբերվել, և Նա կրկին գալու է, որ մեզ իր հետ տանի:

Մենք տենչում ենք հավերժական փառահեղության և արժանապատվությամբ ենք մասնակցում Սուրբ Ընթրիքին, որպեսզի այնտեղ հասնենք:

Մենք հետևում ենք աստվածային օրենքին, որպեսզի Հիսուսի մոտիկությունն ապրենք:

# Խաղաղություն աշխարհում - աշխարհի խաղաղության նշանակության մասին

<< Խաղաղություն աշխարհի վախի մեջ>>,- այսպես է հնչում նորառաքելական ծանոթ մի երգում: Դա ցանկանում են քրիստոնյաները: Դեռ Հիսուսն է ասել իր աշակերտներին, որ նրանք կվախենային աշխարհում, սակայն կարող էին մխիթարվել այնքան ժամանակ, ինչքան նա նրանց հետ կլիներ: Իսկ այսո՞ր:

Կա՞ աշխարհում խաղաղություն: Հազիվ թե: Վերջին տարիներին տեղի ունեցան շուրջ 30 պատերազմներ, քաղաքացիական կռիվներ՝ մեծ թվով անմեղ զոհերով: Ահաբեկչական միավորումներն անկարգություններ են անում: Հյուսիսային Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում բազում մարդիկ վախի մեջ են, նրանք փախչում են դաժանությունից, մահից, լքում են իրենց հայրենիքը: Փախստականների հոսքը ահագնացող չափերի է հասնում: Ընդ որում կա Խաղաղության միջազգային օր, որը ամեն տարի նշվում է սեպտեմբերի 21-ին և հաստատվել է Միավորված ազգերի կողմից: Այն հաստատված է ամբողջ աշխարհի համար: Զենքերը լռեցնելու մի օր պետք է լինի, մեկ օր, երբ զենքերը կլռեն և մարդիկ կմտածեն: Սակայն այս կոչը հազիվ է ուշադրության արժանանում: Ամբողջ աշխարհի քրիստոնեական եկեղեցիները միանում են խաղաղության այս կոչին համընդհանուր աղոթքով: Եկեղեցիների էկումենիկ խորհուրդը ամեն տարի դիմում է իր շուրջ 350 անդամ եկեղեցիներին՝միանալու խաղաղության աղոթքին: Նորառաքելական եկեղեցին էլ է միանում: Ամբողջ աշխարհի համայնքներում տեղի են ունենում խաղաղության աղոթքներ: Այս տարի Միավորված ազգերի կազմակերպությունը հետևյալ նշանաբանն է սահմանել խաղաղության աղոթքի համար. << Բարեկամություն հանուն խաղաղության – արժանապատվություն բոլորի համար>>:

## Խաղաղությունն այսօր

Մարդկության պատմության մեջ ամենակարևոր փաստաթղթերից մեկը Միավորված ազգերի խարտիան է, որի հենց առաջին հոդվածը Միավորված ազգերի ամենակարևոր նպատակն է համարում աշխարհի խաղաղության պահպանումն ընդհանրապես: Առաջ խաղաղությունը պատերազմի բացակայությամբ էր բնորոշվում, այսօր մենք դրա ներքո ավելին ենք հասկանում. մարդու իրավունքների հանդեպ ուշադրություն, կոնֆլիկտների կանխում, զինթափում, խաղաղության դաստիարակություն կամ կոնֆլիկտների արդարացի լուծում: ՄԱԿը այս նպատակով լավ նյութեր է հրատարակել: Խաղաղության այսօրվա ընբռնումը զարգացել է - պատերազմների և քաղաքացիական կռիվների ցանկը նս: Միավորված ազգերի կազմակերպությունն իր պատմության ընթացքում հիմնել է կառույցներ, որոնց նպատակը աշխարհում խաղաղության պահպանումն է, օրինակ, ՄԱԿի ապահովության խորհուրդը, ՅՈՒՆԵՍԿՈՆ, ՄԱԿի փախստականների կոմիսարի բարձր պաշտոնը, մարդու իրավունքների խորհուրդը և միջազգային քրեական դատական ատյանը: Սակայն իսկական խաղաղությունը դեռ չի հաստատվել:

Լուսանկարը՝ Մարսել Ֆեղրե

## Հիսուսը խաղաղություն է - խաղաղությունը Աստծով է

Քրիստոնյաները դա գիտեն: Նրանք խաղաղությունը փնտրում են Աստծո մոտ, Հիսուս Քրիստոսի մոտ: Խաղաղության մեջ ապրելն ավելի է, քան՝ խաղաղությունը պահպանելը: Սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած նորառաքելական ժամերգությունները կրում էին << Խաղաղությամբ ապրել>> վերնագիրը: Մերձավորի հետ խաղաղությամբ ապրել, դրանով է սկսվում ամեն ինչ: Մեր խաղաղությունը Հիսուս Քրիստոսն է, դա գիտեն քրիստոնյաները: Նա զոհաբերեց իր կյանքը, որպեսզի մարդկությունը Աստծո հետ հաշտվել կարողանա: Նրան են պատկանում այս խոսքերը.<< Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ…, ձեր սրտերը թող չխռովեն , և չվախենաք>> / Հովհաննես 14,27/: Հիսուս Քրիստոսին հավատալը խաղաղություն է նվիրում:

## Իսկ մե՞նք, ի՞նչ կարող ենք մենք անել:

Բոլոր մարդկանց հետ ջանացեք ապրել խաղաղությամբ. այսպես է ասվում եբրայեցիներին գրված նամակում / Եբրայեցիներին 12,14/: Մի շատ կարևոր կոչ. թույլ տալ տարածվելու մերձավորի հանդեպ սերը: Այս առումով մերձավորը նա է, ում Աստված մեր կողքին է դրել: Խաղաղության պատրաստները փառաբանվելու են – մենք պատրաստ ենք խաղաղության:

Լուսանկարը՝ ԵՆԱ ՌԴՆ Սուդ - Էսթ

# Աստծո փառահեղությունն արդեն այստեղ ապրել

Արագընթաց նավակով Կիվու լճի վրայով . այսպես 2015-ի հուլիսի 13-ին գլխավոր առաքյալ Ժան Լյուք Շնայդերը ժամերգության մեկնեց Բուկավու /Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն/: Այնտեղ սպասում էին ավելի քան 2000 հավատացյալ եղբայրներ և քույրեր՝ լսելու քարոզը ֆրանսերենով կամ սուահիլիով թարգմանված:

Աստվածաշնչյան խոսքի համաձայն. Մովսեսը հետևեց Աստծո կանչին, հրաժարվեց իր մինչ այդ ունեցած կյանքից և առաջնորդեց իսրայելացի ժողովրդին՝ դուրս բերելով Եգիպտոսից: Չափազանց ընկճված այն բանի համար, որ ժողովուրդը երես է թեքել Աստծուց և ոսկյա հորթին է երկրպագում, Մովսեսը խնդրում էր Աստծո փառահեղությունը տեսնելու համար: Աստծո դեմքը տեսնելը, այնուամենայնիվ, մարդկային հնարավորությունից վեր է: Դրա փոխարեն Աստված Մովսեսից պահանջում է մոտենալ և մի այնպիսի ժայռի վրա կանգնել, որպեսզի Աստծուն հետևից նայի: Ապա Աստված հայտնում է իր բարությունը, իր սերը, իր ողորմածությունը, իր հավատարմությունը և, վերջապես, Մովսեսին է տալիս պատվիրանները:

## Նախ հավատը, հետո միայն ապրումը

Նաև << մենք ենք մեր կյանքում շատ բանից հրաժարվել՝ հանուն Տեր Հիսուսի կամքի>>,- զուգահեռներ անցկացրեց գլխավոր առաքյալը,-<< սակայն, երբեմն մենք ենթարկվում ենք չարի իշխանությանը, հետո հուսահատվում ենք և Աստծո մխիթարության կարիքն ենք զգում>>: Այդ ժամանակ ևս արժևորվում է Աստծուն մոտենալու հրավերը:

<< Աստծուն մոտենալ նշանակում է՝ Աստծու մոտ գալ հավատով: Շատ մարդիկ Աստծուց պահանջում են.<< Ցույց տուր քեզ, ես ուզում եմ քեզ տեսնել, որ հավատամ>>: Բայց այսպես չի լինում: Որպեսզի մեր Աստծուն տեսնեն, պետք է նախ հավատան>>:

Ժամերգության բազմաթիվ մասնակիցներ գտնվում են վրանի ներքո տեղեկայված եկեղեցու առաջ

## Հանդիպում ժամերգության ժամանակ

Դրա համար կարևոր է նաև այն վայրը փնտրել, որտեղ Աստված կհայտնվի.<< Եթե դու հավատով ես գալիս ժամերգության, լսում ես առաքյալի խոսքը, ապա դու կհանդիպես Աստծուն>>,- ասաց գլխավոր առաքյալ Շնայդերը: << Իսկ ի՞նչ է տեղի ունենում ժամերգության ժամանակ>>,- հարցնում է նա և նշում չորս կետ՝

- Աստված հայտնում է իր բարությունը.<< Հիսուսը չի եկել աշխարհը վերացնելու: Հիսուսը եկել է մեղավորներին փրկելու համար: Նա բոլոր մարդկանց փրկությունն է ուզում>>:
- Աստված հայտնում է իր սերը.<< Յուրաքանչյուր ժամերգության ժամանակ Տերը մեզ հնարավորություն է տալիս տոնելու Սուրբ Ընթրիքը: Հիսուսը մոտենում է մեզ և ասում.<< Ես սիրում եմ քեզ, ես քեզ համար եմ զոհաբերվել>>:
- Աստված հայտնում է իր հավատարմությունը.<< Նա մեզ հիշեցնում է, որ Հիսուսը մեզ սիրում է, և որ ոչիչ այդ սերը չի փոխի, անգամ, եթե մենք մեծ մեղք ենք գործել>>:
- Աստված հայտնում է իր ողորմածությունը.<< Նա մեզ հիշեցնում է, որ Աստված իր փառահեղությունն ուզում է մեզ հետ կիսել: Բայց ես չեմ կարողանում դա վաստակել, դրա համար էլ Նա ուզում է ինձ տալ այն , ինչը ես չեմ վաստակել՝ ողորմածությունը>>:

Ապա միայն հերթով կգան, ինչպես Մովսեսի մոտ, Աստծո պատվիրանները .<< Իսկ հերթականությունը կարևոր է>>,- շեշտում է գլխավոր առաքյալը: Աստված << ուզում է դրանով ցույց տալ, որ իր օրենքը իր սիրո արտահայտությունն է>>, քանզի << Նրա օրենքը ծառայում է ոչ թե նրա համար, որ մեզ հպատակեցնի: Աստծո պատվիրանները մեզ պաշտպանում են չարից>>:

## Իմացություն հետադարձ հայացքից

Մովսեսը չի տեսել Աստծուն, բայց նա զգացել է Նրա ներկայությունը.<< Երբ մենք հավատով ենք գնում ժամերգության, լսում ենք Աստծո խոսքի տեղեկացումը: մենք Նրա ներկայությունը ըմբռնում ենք Սուրբ Ընթրիքի ժամանակ: Մենք Հիսուսի ներկայությունը տեսնում ենք նաև եղբայրական միաբանության մեջ>>: Ինչպես Մովսեսը հետևից կարողացավ տեսնել, այսօր էլ հավատացյալները Նրան կարող են ճանաչել հետադարձ հայացք գցելով.<< Եթե դու քո պատմությունը տեսնես, կարող ես հասկանալ, թե ինչպես է Աստված քո ճանապարհին քեզ առաջնորդում: Եթե մենք Նրա պատվիրաններն ենք կատարում, ապա հասկանում ենք. եթե ես դա անեմ, չարից պաշտպանված կլինեմ: Եվ դրանից բացի, կարելի է Աստծո ներգործությունը իր խոսքում տեսնել>>:

## Հիմնական մտքեր

2. Մովսես 33,18

Մովսեսն ասաց.<< Ցույց տուր ինձ քո փառքը>>:

Ժամերգության ժամանակ Սուրբ Հոգին մեզ հայտնում է Աստծո փառահեղությունը նրանով, որ Նա մեզ Աստծո բարությունը, Նրա սերը, Նրա հավատարմությունը, Նրա ողորմածությունը և Նրա օրենքն է տեղեկացնում: Սուրբ Ընթրիքի տոնումը և եղբայրական միասնությունը թույլ են տալիս մեզ ապրելու Տիրոջ ներկայությունը: Մենք գիտակցում ենք Աստծո միջամտությունը մեր անցյալում:

# Լավ հիմքեր լավ որոշումներ կայացնելու համար

Հայաստանը և Վրաստանը, նախկին սովետական երկու հանրապետությունները, որոնք 1991 թվականին անկախություն ձեռք բերեցին և գտնվում են Հյուսիսային Հռենոս- Վեստֆալիայի տարածաշրջանի եկեղեցու հոգացության ներքո, 2015-ի օգոստոսին սպասում էին գլխավոր առաքյալի կողմից անցկացվող ժամերգության հետ կապված ծրագրի կատարմանը: Վրաստանում եկեղեցին ունի չորս սեփական եկեղեցական համայնքներ և մեկ երիտասարդական կենտրոն: Այստեղ ժամերգությունը տեղի ունեցավ մայրաքաղաք Թբիլիսի/Թիֆլիս/ մեր եկեղեցում:.

Աստված մի նպատակ ունի.<< Նա ուզում է մեզ փրկել: Դա է Նրա գործը, որ Նա ուզում է ավարտել>>,- հստակեցրեց գլխավոր առաքյալը: << Փրկության այս գործը վերաբերվում է քեզ, անձնապես հենց քեզ>>: Եվ.<< Ինչ որ քեզ համար արժեքավոր է, արժեքավոր և ինձ համար և մեր մերձավորների համար>>:<< Աստված մեզ թույլ է տալիս ազատ որոշումներ կայացնելու, Նա չի ուզում մեզ ինչ որ բան ստիպել: Դու և ես ամբողջովին ազատ ենք, մենք կարող ենք որոշել: Այնուամենայնիվ, Նա ուզում է մեզ առաջնորդել, Նա խոսում է մեր սրտի հետ: Նա իր խոսքով ցույց է տալիս Աստծո սերը և Քրիստոսի համբերությունը:

ՆԱԵ Հյուսիսային Հռենոս- Վեստֆալիա

Շաբաթ օրը հավատքի եղբայրներն ու քույրերը գլխավոր առաքյալին ցույց տվեցին մայրաքաղաք Թբիլիսին: 4,5 միլիոն բնակչություն ունեցող երկրում ինը համայնքների 1103 քրիստոնյաները փոքր թիվ են կազմում:

## Սեր և համբերություն

Գլխավոր առաքյալ Շնայդերը երեք կետեր է անվանում օրինակներով, որոնցով Սուրբ Հոգին Աստծո սերն է ցույց տալիս:

- << Իր սիրով Աստված ուզում է քեզ իր հետ միասնության տանել>>:
- << Մարդկանց հանդեպ սիրուց Աստված Հիսուս Քրիստոսին երկիր ուղարկեց, որպեսզի ծառայի>>:
- Աստված դա տալիս է մեզ անշահախնդիր, մեծ ողորմածությունից: Ոչ մի մարդ բավարար չափով լավ չէ, այդ վաստակելու համար:

Քրիստոսի համբերության վերաբերյալ ևս գլխավոր առաքյալը երեք կետեր է անվանում՝

- << Հիսուս Քրիստոսը քեզ համար է զոհաբերվել: Բայց, քանի որ Նա քեզ սիրում է, Նա դա արեց մինչև վերջ>>:
- << Իր սիրով Աստված իր յուրայինին ուժ է տալիս, օգնություն է տալիս, որի կարիքը նա ունի>>:
- <<Անգամ, եթե մարդիկ հավատարիմ չեն, Աստված հավատարիմ է մնում և շարունակում օգնել նրան>>:

## Լավ հիմքեր

Այնպես է , որ Աստծո ազատ կամքով մարդն իր սեփական որոշումներն է կայացնում.<< Աստված սպասում է մեզնից, որ մենք Աստծո հասուն զավակներ լինենք>>: Այսպես, որոշ մարդիկ ուզում են Աստծո կամքը կատարել, սակայն վերջում որոշումը թողնում են ուրիշների վրա՝ կամ Աստվածաշնչի սիրված թերթերին, կամ էլ՝ սպասավորի տեսակետին:

<< Դա անհասունություն է,- հստակեցնում է գլխավոր առաքյալ Շնայդերը,- քանի որ, ով ադպես է գործում, նա խուսափում է պատասխանատվությունից>>:<< Մենք ինքներս պետք է որոշումներ կայացնենք: Բայց մենք պետք է դա անենք Աստծո սիրու և Հիսուս Քրիստոսի համբերության մասին հիշելով, միայն դրանից հետո մենք ճիշտ որոշումներ կկայացնենք>>:

## Լավ որոշումներ

յս առումով եկեղեցու ղեկավարը որպես լավ որոշումներ նշում է՝

- << Ես ուզում եմ Աստծուն ծառայել, քանին որ ես Նրան սիրում եմ>>:
- << Ես ուզում եմ իմ մերձավորին սիրել, քանի նոր նա Աստծո համար արժեքավոր է>>:
- <<Ապա մենք ճիշտ օգնություն ենք փնտրում և Աստծուն խնդրում.<< Տուր ինձ ուժ՝ խաչը կրելու>>:
- << Ապա մենք ուզում ենք մինչև վերջ համբերությամբ սպասել>>:
- „<<Հետո մենք ուզում ենք մեր մերձավորի հանդեպ համբերատար լինել>>:

<< Ով այս որոշումն է կայացնում, նա Աստծուն ավելի է մոտենում>>:

## Հիմնական մտքեր

2.Թեսաղոնիկեցիներին 3,5

<< Եվ Տերը թող ուղղի ձեր սրտերը դեպի Աստծու սերը և դեպի Քրիստոսի համբերությունը>>:

Սուրբ Հոգին մեզ տանում է դեպի սեր և համբերություն այնպես, որ մեզ ճանաչել է տալիս Աստծո սերը և Քրիսոսի համբերությունը:

# Արարչագործություն

## 1. ՄՈՎՍԵՍ 1

Արարչագործության մասին պատմությունը Աստվածաշնչի առաջին պատմությունն է:
Այն պատմում է , որ Տեր Աստվածը արարել է երկինքն ու երկիրը, բուսական աշխարհը, կենդանիներին և մարդկանց:

Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը: Երկիրը դատարկ էր և մութ: Ապա Աստված ստեղծեց լույսը: Նա լույսը բաժանեց խավարից, լույսը անվանեց ցերեկ, իսկ մութը՝ գիշեր:
Հետո Նա ցամաքն ու ջուրը բաժանեց միմյանցից: Ջուրը դարձավ առուներ, գետեր, լճեր ու ծովեր: Դրանից հետո Աստված աճել տվեց խոտերին, բույսերին, ծաղիկներին ու ծառերին, որոնք պտուղներ են տալիս: Ամեն ինչ աճեց, երկիրը բազմագույն ու գեղեցիկ դարձավ:

Աստված լուսատուներ դրեց նաև երկնքում՝ արև, լուսին և աստղեր:
Ապա նա ստեղծեց ջրային կենդանիներ. կետեր և բազմաթիվ այլ կենդանիներ, ինչպես նաև թռչուններ: Ջրում վխտում են ձկները, խխունջներն ու խեցգետինները:
Իսկ երկնքում, օդի մեջ սավառնում են թռչունները; Հետագայում էլի ուրիշ կենդանիներ ավելացան: Երկրի վրա ամենուրեք ինչ որ բան վխտում, ցատկում և սուրում է: Վերջում Աստված ստեղծում է մարդուն՝ տղամարդ և կին: Նրանք պետք է բազմանան և ուշադիր լինեն այն ամենի վրա, ինչը Աստված ստեղծել է:
Աստված տեսնում է այն ամենը, ինչ ստեղծել է - ամեն ինչ լավ է:
Ապա Նա հանգստանում է:

Թե ինչպես է աշխարհը ստեղծվել, Աստվածաշնչում երկու տարբեր տեղեկատվությամբ է պատմվում: Դրանք իրար ետևից գտնվում են Մովսեսի առաջին գրքի սկզբում: Առաջին տեղեկությունը ներկայացնում է արարման բոլոր օրերը խիստ կանոնակարգով՝ նման թվարկման: Այստեղ կինն ու տղամարդը ստեղծված են Աստծո նմանությամբ: Երկրորդ տեղեկությունը ավելի տպավորիչ է պատմում: Այն նկարագրում է , որ առաջ տղամարդն է ստեղծվել, իսկ ավելի ուշ կինը՝ տղամարդու կողոսկրից: Երկրորդ տեղեկությունն ավելի հին է:

Միրելլա Ֆրբսուեաան

# ԱՅՑ ԿԱՄԻԼԱՅԻՆ՝ ՆԵՄԲՈՒ / ՊԱՐԱԳՎԱՅ /

Լուսանկարը՝ մամայինը

Ողջույն: Իմ անունը Կամիլա է, ես ինը տարեկան եմ և ապրում եմ Պարագվայում: Սա մի երկիր է, որը գտնվում է Հարավային Ամերիկայում: Գուարանիով՝ բնիկների լեզվով, պարագվայ նշանակում է ջուր, որը հոսում է դեպի ջուրը, կամ նաև՝ գետ, որը ծով է ծնում: Պարագվայ անունը տրվել է համանուն գետի անունից, որը հոսում է մեր երկրի հյուսիսից դեպի հարավ: Այն երկիրը բաժանում է երկու մասի: Գետի արևմտյան մասում է ընկած Գրան Չաոն, որտեղ ամռանը կարող է ավելի քան 45 աստիճան շոգ լինել: Նվազ խոտածածկ վայրերում խոշոր եղջերավորների նախիրներ են արածում: Արևելքում հաճախ է անձրևում, այնտեղ կան արևադարձային անտառներ:

Պարագվայ գետի ափին են գտնվում երկրի վրա ապրող ամենամեծ կրծողները: Դրանցից շատերը ավելի քան մեկ մետր երկարություն ունեն և կշռում են 60 կիլոգրամ: Նրանք կոչվում են քափիբարա: Նրանք բուսակեր են և հիմնականում սնվում են խոտով: Նրանք մի քիչ նման են ծովախոզուկներին, որոնց հետ նրանք ցեղակիցներ են: Քանի որ նրանք ոտնամատների արանքներում լողաթաղանթներ ունեն, կարողանում են արագ լողալ:



Ձիուն ու փղին ես ինքս եմ նկարել: Իմ ազատ ժամանակ ես հաճախ եմ նկարում: Դա ինձ շատ է դուր գալիս: Երբ ես մեծանամ, ուզում եմ նկարչության ուսուցչուհի դառնալ:

Պարագվայում բոլոր երեխաները պետք է մինչև իններորդ դասարանը դպրոց գնան: Հիմա ես հաճախում եմ չորրորդ

դասարան: Քանի որ, ինչպես իսպաներենը, այնպես էլ գուարանին պաշտոնական լեզուներ են, երկուսն էլ մենք սովորում ենք:
Դպրոցական առարկաների ուսուցման հետ միասին ես այլ պարապմունքների էլ եմ մասնակցում: Վերջերս սովորում եմ ջութակ նվագել: Իմ քույր Վերոնիկան նույնպես ջութակ է նվագում: Նա երկար ժամանակ է, ինչ սովորում է, և երբեմն նվագում է նաև ժամերգության ժամանակ:

Վերոնիկան նաև լավ երգում է, նա արդեն 18 տարեկան է:

Սա նորառաքելական եկեղեցի է Ֆերնանդո դե լա Մորայում: Այստեղ ենք մենք՝ մայրս,

Վերոնիկան և ես գնում ժամերգությունների, իմ մայր Կարինան կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհի է: Համայնքը մեր բնակավայրից մոտավորապես 20 կիլոմետր է հեռու:
Իմ հայր Էռնեստոն ժամերգության գնալիս ավելի երկար ճանապարհ է անցնում, քան՝ մենք: Նա Սիուդադ դել Էսթե համայնքի առաջնորդն է, որը 324 կիլոմետր հեռու է գտնվում: Ամեն շաբաթվա վերջում նա մեկնում է այնտեղ և հատում է Պարագվայը արևմուտքից արևելք: Սիուդադ դել Էսթեն Պարագվայի երկրորդ մեծ քաղաքն է: Իմ ընտանիքը, այսինքն՝ իմ ծնողները, քույրս և ես ապրում ենք Նեմբուում, երկրի մայրաքաղաք Ասունսիոնի արվարձանում: Այն մեր երկրի ամենամեծ, իսկ Հարավային Ամերիկայի ամենահին քաղաքն է:

# Փոստարկղ

## Ինչպե±ս եք սկսում Նոր տարին:

<< Նոր տարվա մեկնարկը տոնում եմ ծնողներիս և եղբորս հետ՝ հրավառությամբ: Ես հրավառության սիրահար եմ>>: Մաթիաս, 12 տարեկան, Մոնտեվիդեոյից / Ուրուգվայ/

,, Նոր տարին ես սկսում եմ իմ ընտանիքի հետ: Մենք գնում ենք Աստծո տուն և այնտեղ մտածում այն բոլոր գեղեցիկ բաների մասին, որ գալու է>>: Սանտիագո, 7 տարեկան, Լա Կորունայից / Իսպանիա/ո)

<<Ես կցանկանայի հաջորդ տարում ձիավարել>>, 5 տարեկան, Թաունուսի Քյոնիգշթայնից

<< Ես կցանկանայի իմ մորաքրոջ մոտ գնալ, նա համեղ թխվածքներ է պատրաստում>>, Քրիստիան, 8 տարեկան, Թաունուսի Քյոնիգշթայնից

Լուսանկարը՝ Օլիվեր Գյութենի

# Հիսուս Քրիստոսի եկեղեցին

2015-ի սեպտեմբերին լույս տեսավ Նորառաքելական եկեղեցու <<Դավանաբանությունը հարցերում և պատասխաններում>> գիրքը : Ընդհանուր թվով 750 հարցերից և պատասխաններից ,, քմյունիթին.. մի քանի հարցեր ու պատասխաններ է առանձնացրել: Այս հրատարակման մեջ խոսքը գնում է Հիսուս Քրիստոսի եկեղեցու և սպասավորության մասին:

Ի±նչ է ընդհանրապես նշանակում ,,եկեղեցի,, հասկացությունը:

Ընդհանուր բառագործածության մեջ եկեղեցի բառն ունի երեք տարբեր նշանակություններ: Նշանակություններից մեկն այն է, որ եկեղեցին քրիստոնյաների Աստծո տունն է/ օրինակ՝գյուղի եկեղեցի/, որտեղ հավատացյալները հավաքվում են ժամերգության: Մեկ այլ իմաստով՝ եկեղեցի ասելով հասկացվում է որևէ վայրի համայնք: Դրանցից բացի, եկեղեցի ասելով հասկանում են քրիստոնեական միավորում /դենոմինացիա/, օրինակ՝ Նորառաքելական եկեղեցի կամ կաթոլիկ եկեղեցի:

,,Դենոմինացիա,, հասկացությունը ծագել է լատիներենից / բնորոշում, անվանում/, կրոնական միավորման ոչ այնքան կիրառելի իմաստն է:

Անհրաժեշտ է± արդյոք եկեղեցին:

Այո, եկեղեցին քրիստոնյա լինելու համար անհրաժեշտ է, քանզի միայն այնտեղ ենք լսում Աստծո խոսքը, ընդունում Սուրբ Հաղորդություն և միասնություն կազմում Աստծո ու միմյանց հետ: Այս բաղադրիչներն իրենց ընդհանրության մեջ անհրաժեշտ են փրկության հասնելու համար: Առանց եկեղեցու մարդու համար դա հնարավոր չէ

Ինչպե±ս են երևում Հիսուս Քրիստոսի եկեղեցու անտեսանելի կողմերը:

Հիսուս Քրիստոսի եկեղեցու անտեսանելի կողմերը

երևում են սրբագործման շնորհիվ; Դա մարդու համար անտեսանելի է և ըմբռնվում է միայն հավատի միջոցով:

Սրբագործման օրինակներ են՝
- Երբ Աստված ներում է մեղքերը,
- Երբ մկրտությամբ մաքրվում է ադամական մեղքը,
- Երբ Աստված ուղարկում է Սուրբ Հոգու շնորհները,
- Երբ Սուրբ Հաղորդությամբ տրվում է Քրիստոսի արյունն ու մարմինը,
- Երբ Սուրբ Հաղորդություն է նվիրաբերվում ննջեցյալներին,
- Երբ կատարվում են օրհնանքի արարողություններ / կոնֆիրմացիա, ձեռնադրում և այլն/,
- Երբ Աստված ազդում է մարդկային բառերով ասված քարոզով,
- Երբ օրհնանք է տրվում համայնքին:

Ե±րբ են երևում եկեղեցու տեսանելի կողմերը:
Եկեղեցու տեսանելի կողմերը երևում են, երբ մարդը առնչվում է եկեղեցուն: Այն տեսանելի է, օրինակ՝
- Երբ մարդը ընդունում է Հիսուս Քրիստոսին,
- Երբ տոնվում է ժամերգություն,
- Երբ ջուրը օծվում է և Սուրբ ջրով Մկրտության արարողություն է կատարվում,
- Երբ սպասավոր եղբայրները առանձնացնում են Սուրբ Ընթրիքի Հացն ու Գինին և Սուրբ Հաղորդություն մատուցում,
- Երբ առաքյալները ձեռքերը դնում են հավատացյալների գլխներին և Սուրբ Հոգով կնքում,
- Երբ քարոզվում է,
- Երբ աղոթվում է,
- Երբ աղոթվում է,

## Ինչպիսի± հատկանիշներ ունի Հիսուս Քրիստոսի եկեղեցին:

Քրիստոսի եկեղեցին, ինչպես տեսանելի, այնպես էլ անտեսանելի կողմերով, ունի չորս հատկանիշներ՝ միասնություն, սրբություն, ընդհանրություն և առաքյալների ծառայություն: Եկեղեցու այս հատկանիշները անվանում են ,, նոթա էկլեսիա,,:

## Ի±նչ է նշանակում ,,եկեղեցու միասնություն,,:

Եկեղեցին միասնական է, քանի որ միայն մեկ Աստված կա: Եկեղեցին վկայում է Աստծո միասնության վերաբերյալ՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու, որով նա արարում է; Հիսուսը միասնականությունը միմյանց հետ և սերը միմյանց հանդեպ որպես ճանաչելի նշաններ է համարում բոլոր նրանց համար, ովքեր նրան են պատկանում ու հետևում: Այսպես է դրսևորվում Աստծո էությունը եկեղեցում.<< Աստված սեր է, և ով սիրո մեջ է ապրում, բնակվում է Աստծո մեջ>>/1. Հովհաննես 4,16/

## Ի±նչ է նշանակում ,, Հիսուս Քրիստոսի եկեղեցու սրբություն,,:

Եկեղեցին սուրբ է, քանի որ Սուրբ Երրորդություն Աստվածը սուրբ է: Այն արտահայտվում է Քրիստոսի եկեղեցում՝ խոսքով և Հաղորդությամբ:

## Ի±նչ է նշանակում ,, Հիսուս Քրիստոսի եկեղեցու ընդհանրությունը,,:

Եկեղեցին ընդհանուր է, քանի որ Աստված բոլոր մարդկանց համար է ներկա, և ողջերի, և մեռյալների: Ավետարանի ուսուցման համար սահմաններ չկան;

## Ի±նչ է նշանակում ,, Հիսուս Քրիստոսի եկեղեցու առաքյալների ծառայություն,,:

Եկեղեցին աաքելական է, քանի որ այնտեղ առաքյալների ուսմունքն է տեղեկացվում և առաքյալների սպասավորությունն է գործում:

## Որտեղի±ց կարելի է իմանալ Հիսուս Քրիստոսի եկեղեցու մասին:

Հիսուս Քրիստոսի եկեղեցին այնտեղ է, որտեղ տարբեր ընդգրկումով առկա է միասնություն, սրբություն, ընդհանրություն և առաքյալների ծառայություն: Հիսուս Քրիստոսի եկեղեցին ամենապարզ ձևով դրսևորվում է այնտեղ, որտեղ առկա են առաքյալների ծառայությունը, Սուրբ Հաղորդության մատուցումը ողջերի և մահացածների համար, ճշմարիտ խոսքի տարածումը: Այդտեղ է սկսվում Տիրոջ փրկության գործը նրանով, որ Քրիստոսի հարսնացուն պատրաստվում է երկնքի հարսանիքին:

## Ի±նչն է կապում առանձին եկեղեցական միաբանություններն իրար հետ:

Առանձին եկեղեցական միաբանություններին կապող հիմքերն են՝ Աստծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով մկրտությունը, Հիսուս Քրիստոսին ճանաչելը և հավատը Սուրբ Երրորդություն Աստծո հանդեպ: Մկրտվածների միջոցով, ովքեր ապրում են հավատով և Քրիստոսին իրենց Տերն են համարում, եկեղեցին ճանաչելի է դառնում որպես հավատի, հույսի և սիրո միաբանություն:

Խմբագրական.
Հրատարակիչ՝ Ժան–Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասե 243, CH-8051 Ցյուրիխ/Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտեր Շթրասե 22, 63263 Նոյ-Իզենբուրգ/Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Լուսանկարը՝ ՆԱԵ Հարավային Աֆրիկա

# Սպասավորություն

Ի±նչ է նշանակում ,, սպասավորություն,, :
որի հետ կապված են կոնկրետ առաջադրանքներ և պատասխանատվություն: Այլ խոսքով ասած՝ սպասավորները համայնքը ղեկավարելու ու համապատասխան որոշումներ կայացնելու հեղինակությունն ունեն:

Ո±րն է հոգևոր սպասավորության սկզբնաղբյուրը:
Հոգևոր սպասավորության սկզբնաղբյուրն այն է, որ Հայր Աստվածը ուղարկել է Հիսուս Քրիստոսին, այսինքն՝ Հիսուս Քրիստոսը Աստծո կողմից ուղարկվածն է: Որպես այդպիսին Նա լիազորված է, օրհնված և սրբացված՝ հանուն մարդկանց փրկության: Առաքյալները Հիսուս Քրիստոսի կողմից են ուղարկված: Հոգևոր սպասավորությունը միշտ կապված է Հիսուս Քրիստոսի և Նրա կողմից ուղարկված առաքյալների հետ: Այսինքն՝ սպասավորությունը և առաքելոց ծառայությունը կապված են միմյանց հետ. այնտեղ, որտեղ առաքելոց ծառայությունն է առկա, այնտեղ էլ հոգևոր ծառայությունն է:

,,Առաքելություն,, հասկացությունը ամենից առաջ կիրառվում է այն ժամանակ, երբ նկարագրվում է առաքյալների ծառայությունը իր ամբողջականության մեջ /առաքելոց – Հիսուսի առաքյալներ/: Քարոզչի սպասավորությունը կատարողները և սարկավագները գործում են առաքյալների առաջադրանքով և ընդունում են հոգին խնամելու, Աստծո խոսքը տեղեկացնելու և Սուրբ Հաղորդությունը մատուցելու առաջադրանքը:

Ի±նչ ենք հասկանում հոգևոր սպասավորության ,,լիազորություն,, ասելով:
Հոգևոր սպասավորությունը կատարվում է Հիսուս Քրիստոսի առաքյալների առաջադրանքով: Դրանով, նրանք, ովքեր ընդունում են սպասավորությունը, առաքյալների լիազորության մասնակիցն են դառնում: Ուստի, սպասավորություն ընդունողը գործում է առաքյալի անունով և դա ներկայացնում է իր սպասավորության շրջանակում: Վերջապես, առաքյալն է ձեռնադրում սպասավորին: Ձեռնադրվածը պարտավորված է և պատասխանատու իրեն ձեռնադրողի առաջ:

Լիազորությունը կիրառելու օրինակներ.

Երբ առայալը հայտարարում է մեղքերի քավության մասին, ապա նա գործում է Հիսուս Քրիստոսով ձեռք բերված լիազորության հիմունքով: Այս դեպքում առաքյալը մեղքերի քավությունը տալիս է հետևյալ խոսքերով. <<Ես ձեզ եմ հայտնում ուրախ լուրը. մեր Տեր Հիսուս Քրիստոսի, կենդանի Աստծո Որդու անունով ձեր բոլորի մեղքերն են քավված>>: Երբ քարոզիչը մեղքերի քավության մասին է տեղեկացնում, ապա նա գործում է որպես առաքյալի ներկայացուցիչ: Այս դեպքում քարոզիչը մեղքերի քավությունը տեղեկացնում է հետևյալ խոսքերով. <<Ինձ ուղարկող առաքյալի անունով, հայտնում եմ ձեզ ուրախ լուրը. մեր Տեր Հիսուս Քրիստոսի, կենդանի Աստծո Որդու անունով ձեր բոլորի մեղքերն են քավված>>:

## Ի±նչ ենք հասկանում<<ծառայություն>> ասելով Հիսուս Քրիստոսի եկեղեցում :

Յուրաքանչյուր մկրտված անձ կոչված է ծառայելու Տիրոջը, սիրելու մերձավորին և ճանաչել տալու հավատը / հմտ. Հովհաննես 12, 26/: Քրիստոսի եկեղեցում առանձին հավատացյալների որոշակի առաջադրանքներ և գործունեության ոլորտներ տալը, որոնք ի սպաս են դրվելու հանուն հավատացյալների և ավետարանի տարածման, համարվում է ծառայություն: Նման ծառայություններ կատարվում են այնտեղ, որտեղ մկրտվածները իրենց հավատը Հիսուս Քրիստոսի՝ որպես իրենց Տիրոջ հանդեպ, խոսքով և գործով ցույց կտան:

## Ի±նչ տարբերություն կա Հիսուս Քրիստոսի եկեղեցուն ծառայելու և հոգևոր սպասավորություն միջև:

Ծառայությունները տարբերվում են հոգևոր սպասավորությունից նրանով, որ դրանք կարող են կատարվել առանց ձեռնադրման:

## Ի±նչ սպասավորություն է հիմնադրել Հիսուս Քրիստոսը:

Հիսուս Քրիստոսը իր եկեղեցում ուղղակիորեն միայն մի սպասավորություն է տվել. առաքյալների սպասավորությունը: Նա լիազորել է առաքյալներին՝ զինելով օրհնությամբ, սրբությամբ և Սուրբ Հոգով. <<Ինչպես իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ուղարկում եմ ձեզ: Երբ այս ասաց, նրանց վրա փչեց և ասաց. <<Առեք Սուրբ Հոգին, եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի, եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի>> / Հովհաննես 20, 21-23/: Նա առաքյալներին վստահել է Սուրբ Հաղորդության մատուցումը: Այս ձևով Նրա զոհաբերությունը մերձենալի է դառնում մարդկանց / հմտ. Մատթեոս 28,19, 20/:

Սուրբ Հաղորդությունը մատուցելու համար առաքյալի լիազորությունը նշանակում է, որ առաքյալները Հիսուս Քրիստոսի կողմից են հանձնարարություն ստացել: Անգամ, եթե ոչ բոլոր Հաղորդություններն են առաքյալների կողմից մատուցվում, այնուամենայնիվ, Սուրբ Հաղորդության մատուցումը առաքելոց ծառայությանն է վերաբերում:

## Ըստ Նոր կտակարանի ռ±վ է նվիրաբերում Սուրբ Հոգու շնորհները:

Գործք առաքելոցի 8, 15-18 –ում գրված է, որ Սուրբ Հոգու շնորհների նվիրաբերումը կապված է առաքյալների ծառայության հետ: Փիլիպոսը քարոզում էր Սամարիայում և հավատացյալներին մկրտում էր ջրով: Առաքյալները լսեցին այդ մասին և այնտեղ ուղարկեցին Պետրոսին ու Հովհաննեսին: Նրանք աղոթեցին այն բանի համար, որ ընդունեն Սուրբ Հոգին, քանի որ նրանցից ոչ մեկը չէր ընդունել այն, այլ նրանք մկրտվել էին միայն Տեր Հիսուս Քրիստոսի անունով: Ապա նրանք նրանց վրա պարզեցին իրենց ձեռքերը և նրանք ստացան Սուրբ Հոգի: Դա նշված է Գործք առաքելոցի 19,6-ում.,, Եվ երբ Պողոսը նրանց վրա ձեռք դրեց, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա,,:

## Որո±նք էին առաքյալի կարևոր առաջադրանքները:

Առաքյալի կարևոր առաջադրանքներից մեկը այն էր, որ տեղեկացնեն այն մասին, որ Հիսուս Քրիստոսը իրենց հետ է եղել, մահացել է և մահից հարություն առել / հմտ. Գործք առաքելոց 13, 26-41, 17, 1-4 /: Նրանք պայքարում էին կեղծ ուսմունքների դեմ՝ դրանք հերքելով / հմտ. Կորնթացիներին 1, 15, 3-8, 1 Հովհաննես 4, 1-6/

## Ո±ր ծառայությունն է որպես առաջինը համարվում առաքյալների գործունեության մեջ:

Հոգեգալստյան տոնից սկսած առաքյալները իրականացնում են իրենց առաջադրանքները և քարոզում են Ավետարանը: Շուտով պարզ է դառնում, որ նրանք կարիք ունեն օգնականների: Այս առումով յոթ տղամարդ նկատի առնվեցին: Նրանք օրհնվեցին իրենք ծառայության համար. առաքյալները աղոթեցին և ձեռքները նրանց վրա դրեցին: Այդ յոթ տղամարդիկ դարձան առաջին սարկավագները:

,,Նրանց կանգնեցրին առաքյալների առաջ և աղոթք անելով, նրանց վրա ձեռք դրեցին,, /Գործք առաքելոց 6, 6 /

## Սպասավորության ի±նչ պաշտոններ և պաշտոնական մակարդակներ կան Նորառաքելական եկեղեցում:

Նորառաքելական եկեղեցում կան երեք սպասավորական մակարդակներ՝ տարբեր հոգևոր լիազորություններով. առաքյալ, քարոզիչ և սարկավագ:

- Առաքյալների պաշտոնական մակարդակին են պատկանում ՝ գլխավոր առաքյալը, շրջանային ապաքյալը և առաքյալը:
- Քարոզչական մակարդակին են պատկանում՝ եպիսկոպոսը, շրջանային ավագը, շրջանային ավետարանիչը. հովիվը , համայնքի ավետարանիչը և քարոզիչը:
- Սարկավագի մակարդակին են պատկանում՝ սարկավագը և կիսասարկավագը:

# Կոչ ամբողջ աշխարհին՝ հրավերք 2019-ի ԵրիտասարդությանՄիջազգային Օրվա միջոցառմանը

Photo: EJT Foto-Team

2019 թվականի մայիսի 30-ից մինչև հունիսի 2-ը տեղի է ունենալու ,,Եվրոպայի Երիտասարդության օր,, միջոցառումը՝ այս անգամ ամբողջ աշխարհի երիտասարդների մասնակցությամբ: <<Ես կուրախանամ, երբ 2019-ի Հոգեգալստյան տոնին ամբողջ աշխարհից շատ երիտասարդներ Դյուսելդորֆ գան>>,- ասաց գլխավոր առաքյալ Ժան Լյուք Շնայդերը՝ Նոր առաքելոց եկեղեցու գլխավոր պաշտոնյան:

2009 թվականին 35 000 երիտասարդներ եկան Դյուսելդորֆ՝ մասնակցելու Եվրոպայի Երիտասարդության օրվա միջոցառմանը: 5 տարի անց 45 000 հավատացյալներ մեկնեցին Մյունխեն՝ մասնակցելու եկեղեցու միջազգային օրվա միջոցառմանը: Հիմա էլ պետք է հաջորդող հինգերորդ տարում տեղի ունենա հաջորդ մեծ միջոցառումը; Դա որոշել են Նոր առաքելական եկեղեցու շրջանային առաքյալները Յոհաննեսբուրգում (Հարավային Աֆրիկա) տեղի ունեցած իրենց կիսամյակային նիստի ժամանակ: Շրջանային առաքյալ Ռայներ Շտորքը (Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիա) նախապես ներկայացրել է միջազգային երիտասարդական օրվա պլանավորման դիրքորոշումը:

## Կենտրոնական Եվրոպա

Որպես միջոցառման վայր Դյուսելդորֆն ունի շատ առավելություններ: Քաղաքը գտնվում է Եվրոպայի կենտրոնում, ունի հեռու և մոտ վայրերը կապող տրանսպորտային հանգույցներ, միջազգային օդանավակայան: Բացի այդ, 2009-ի եվրոպական երիտասարդական միջազգային օրվա միջոցառման շնորհիվ այն հայտնի է և կազմակերպական առումով ամեն ինչ հեշտանում է: Եվրոպայում Դյուսելդորֆը աչքի է ընկնում նաև նրանով, որ տոնավաճառային տարածքների կողքին գտնվող տանիքածածկ մարզադաշտն ունի 45.000 նստատեղ: Արենան ջեռուցվող է և իր շարժական ծածկով հնարավոր է դարձնում պլանավորումը կատարել անկախ եղանակային պայմաններից:

Դյուսելդորֆի տոնավաճառային տարածքում կան տարբեր միջոցառումների սրահներ՝ շուրջ 90.000 քմ տարածքով, որոնք միմյանց հետ կապված են կարճ ճանապարհներով: Տոնավաճառի կոնֆերանս կենտրոնում կան լրացուցիչ տարբեր սենյակներ՝ փոքրիկ /20-150 մարդկանցով / միջոցառումների և սեմինարների համար: Այստեղ կան նաև սպասարկման սրահներ, քնելու համար նախատեսված 123.000 քմ մակերեսով 9 սրահներ՝ շուրջ 24 000 մարդու համար: Սրահների միջև գտնվող տարածքները կարելի է օգտագործել որպես բացօթյա բեմեր:

## Սպասվում է ավելի քան 30.000 մասնակից

2019-ի Միջազգային Երիտասարդական օրվա միջոցառմանը հրավիրված են 14-35 տարեկան երիտասարդ հավատացյալներ՝ անկախ ընտանեկան կարգավիճակից, այդ թվում նաև ուղեկցողներ և հարյուրավոր օգնականներ: Արդեն Եվրոպայի Երիտասարդական օրվա միջոցառման հանդեպ մեծ հետաքրքրություն էր առաջացել Եվրոպայից դուրս գտնվող միջազգային երիտասարդների հանդիպման առումով: Այսպես, 2009-ին հարյուրավոր մասնակիցներ Աֆրիկայից, Ամերիկայից, Ասիայից մեկնել էին Դյուսելդորֆ: Այս անգամ պետք է ավելի շատ միջազգային հյուրեր լինեն:

Ընթացիկ պլանավորումը այնպես է կազմակերպվում, որ Հոգեգալստյանը տեղի ունենա բացման ժամերգություն: Բացման մեծ տոնակատարությունը նախատեսված է ուրբաթ կեսօրից առաջ: Դրանից հետո երկօրյա ծրագիր է կազմակերպվելու տոնավաճառի սրահներում բազմաթիվ ներկայացումներով, ելույթներով, սեմինարներով, համերգներով և այլն: Շաբաթ օրը պետք է տեղի ունենա երաժշտական երեկո: Կուլմինացիոն կետը և միևնույն ժամանակ Երիտասարդական օրվա միջոցառման հրաժեշտի արարողությունը տեղի է ունենալու կիրակնօրյա ժամերգությամբ, որն անց է կացնելու գլխավոր առաքյալ Ժան Լյուք Շնայդերը:

## Միջազգային հյուրեր - միջազգային ծրագիր

Միջազգային Երիտասարդական օրվա հյուրատերը Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիայի Նորառաքելական եկեղեցին է, որն էլ շրջանային առաքյալ Արմին Բրինկմանի

ղեկավարությամբ կազմակերպեց 2009-ի Եվրոպայի Երիտասարդության օրվա միջոցառումը: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա ցանկությունն այն է, որ երիտասարդական օրը կազմակերպվի տարբեր շրջանների և երկրների բազմաթիվ նորառաքելական քրիստոնյաների հետ: Այս առումով շրջանային առաքյալ Ռայներ Շտորքը շրջանային առաքյալների ժողովի ժամանակ հորդորեց, որ հնարավորինս ամբողջ աշխարհի շրջանային առաքյալների սպասավորության տարածքներում ծրագիր մշակվի: Նա ուրախ կլինի բոլոր երկրներից ժամանած հյուրերի, ազգերի և նրանց մշակույթների համար: <<Մեզ՝ տանտերերիս համար, այս իրադարձությունը մեծ պատիվ է, բայց նաև մարտահրավեր>>: Այսպես է ասում Հյուսիսային Հռենոս-Վեստֆալիայի Նորառաքելական եկեղեցու ղեկավարը. <<Սակայն 2009 թվականի փորձը և մեր համայնքների օժանդակությունը ինձ վստահեցնում է, որ դա հաջողված միջոցառում է լինելու>>:

Շրջանային առաքյալն արդեն այսօր շնորհակալ է բոլոր նրանց, ովքեր պատրաստ են Համբարձման շաբաթվա հանգստյան օրերին որպես օգնականներ օժանդակելու. <<Մենք կարիք ենք ունենալու շատ օգնականների, որպեսզի մեր հյուրերի և միջոցառումների կազմակերպման համար հոգ տանենք>>: Բայց, այնուամենայնիվ, նա չի մտահոգվում. <<Այսօր շատերն են դեռ խոսում Եվրոպայի Երիտասարդական օրվա առանձնահատուկ մթնոլորտի մասին: Դրանից էլ ես համոզված եմ, որ մենք շատ օգնականներ կարող ենք ունենալ, ովքեր Դյուսելդորֆում Երիտասարդական օրվա միջոցառման ընթացքում կաջակցեն>>:

## Կազմակերպական աշխատանքերը կմեկնարկեն 2016 թվականին

2019-ի Երիտասարդության Միջազգային օրվա առիթով դեռ էլի մանրամասնություններ կհրատարակվեն: Այդ նպատակի համար պետք է ձևավորվեն կազմակերպական շտաբներ, որոնց աշխատանքները կսկսվեն 2016-ին: Այս առումով պետք է համաձանեցում տեղի ունենա շրջանային առաքյալների հավաքույթի ժամանակ: Երիտասարդական օրվա անցկացման համար նախատեսված է մի ՍՊԸ-ի հիմում, ինչպես 2009-ի Երիտասարդական օրվա ժամանակ: Ընկերություններ կարող են դառնալ շատ եվրոպական համայնքային եկեղեցիներ:

# Նախատեսում՝

| | |
|---|---|
| 03.01.2016 | Զիգեն / Գերմանիա/ |
| 10.01.2016 | Ույո Օբիո / Նիգերիա/ |
| 12.01.2016 | Յամուսուկրո /Յվորի Քոասթ/ |
| 07.02.2106 | Ուլմ /Գերմանիա/ |
| 14.02.2016 | Բեռլին / Գերմանիա/ |
| 19.02.2016 | Լուբանգո / Անգոլա/ |
| 21.02.2016 | Լուանդա / Անգոլա/ |
| 27.02.2016 | Մվանդա / Կոնգոյի ԴՀ/ |
| 28.02.2016 | Կինշասա/ Կոնգոյի ԺԴՀ/ |
| 06.03.2016 | Բիլեֆելդ / Գերմանիա/ |
| 13.03.2016 | Ցյուրիշ / Շվեյցարիա/ |
| 20.03.2016 | Կիմբերլի / Հարավային Աֆրիկա/ |
| 25.03.2016 | Նորդհայդե / Գերմանիա/ |
| 27.03.2016 | Բրեմեն / Գերմանիա/ |

New Apostolic Church
International